Հաստատում եմ՝
Ավանդական բժշկության համալսարանի
Ռեկտոր, ԳԽ. Նախագահ

_____ Ն.Խ.Սարիբեկյան

«20» 09 2023թ.

ԿԱՐԳ
ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Սույն կարգով սահմանվում է Ավանդական բժշկության համալսարանի /այսուհետ՝ ԱԲՀ/ ուսանողների գիտելիքների, կարողությունների, հմտությունների ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը:

1.2 Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ ՀՀ կառավարության 22.12.2005թ. N 2307-Ն որոշումը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին», «Կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կրթության և գիտության նախարարի 19.06.2007թ. հաստատած «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնական գործընթացի կրեդիտային համակարգով կազմակերպման», 18.07.2015թ. «Անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ուսումնառության մասին» ՀՀ կառավարության 19.03.2015թ. N250-Ն որոշումը, «ՀՀ բարձրագույն մասնագիտական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ՀՀ ԿԳ նախարարի 07.11.2017թ. N1282-Ն հրամանը, ԱԲՀ կանոնադրությունը և կանոնակարգող այլ փաստաթղթեր:

2. ՈՒՍԱՆՈՂԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱԶՄԱԳՈՐԾՈՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱԲՀ-ում գործում է ուսանողների գնահատման բազմագործոն համակարգ, որի կիրառման հիմնական նպատակներն են՝

- ուսումնական կիսամյակի ընթացքում ուսանողների գիտելիքների պարբերաբար ստուգման և գնահատման միջոցով կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողների առաջադիմությունը, ուսումնառության գործընթացում ապահովել մրցակցություն, խրախուսել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, բարելավել դասահաճախումները:
- Ընթացիկ ստուգումների իրականացման օգնությամբ գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործել որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական

բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2.1. **Ուսանողների գնահատումը** ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- դասընթացին ուսանողի մասնակցություն՝ դասահաճախումների հաշվառման օգնությամբ,
- դասընթացի /ուսումնական մոդուլի/ ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ և միջանկյալ ստուգումներ կիսամյակի ընթացքում:
- Ուսումնական մոդուլի ամփոփիչ գնահատում քննաշրջանում:
- Ինքնուրույն անհատական աշխատանքների գնահատում /ռեֆերատ, շնորհանդեսի պատրաստում և ներկայացում, ելույթներ ուսանողական գիտաժողովում՝ տվյալ դասընթացի ծրագրի շրջանակներում/:
- Բուհում գործում է գնահատման 10 բալային համակարգ՝ համապատասխան միավորներով:

Աղյուսակ 1

Գնահատման ձևավորման բաղադրիչներ

	ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
1.	Հաճախումներ	16 միավոր
2.	Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում	70 միավոր
3.	Ինքնուրույն անհատական աշխատանք	14 միավոր
Ընդամենը		100 միավոր

2.2. Գնահատման մեթոդաբանությունը

Կրթական մոդուլի ուսուցման տևողությունը 1 կիսամյակ է՝ դրանով սահմանված կրթական արդյունքների պարտադիր գնահատմամբ /ստուգարք կամ քննություն/:

Ուսանողների գիտելիքները գնահատվում են ընթացիկ, միջանկյալ ստուգումների, ամփոփիչ քննությունների միջոցով, որոնք կարող են անցկացվել բանավոր կամ գրավոր (այդ թվում՝ թեստային տարբերակ կամ գրավոր շարադրում), գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ, գործնական հմտությունների, կարողությունների ստուգմամբ՝ ելնելով դասընթացի առանձնահատկություններից:

Գնահատման ձևավորման բաղադրիչներում կարևորվում է ուսանողների գիտելիքների ընթացիկ ստուգումը՝ ակտիվությունը խթանելու նպատակով:

- Քննական դասընթացից /ուսումնական մոդուլից/ ուսանողի ստացած արդյունարար /կիսամյակային/ միավորը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ աղյուսակ 2-ի բաղադրիչների:

Աղյուսակ 2

Քննական դասընթացի բաղադրիչներ

	ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
1.	Հաճախումներ (Գ հաճախ.)	16 միավոր
2.	Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում • Ընթացիկ ստուգում /ակտիվություն/ (Գընթ. ստ.) • Ամփոփիչ քննություն (Գամփ. քնն.)	 20 միավոր 50 միավոր
3.	Ինքնուրույն անհատական աշխատանք (Գինքն.)	14 միավոր
Ընդամենը		100 միավոր

Քննական դասընթացի /ուսումնական մոդուլի/ արդյունարար միավորը հաշվարկվում է որպես առանձին բաղադրիչներով վաստակած միավորների գումար՝

Գարդ.=Գհաճախ.+Գընթ. ստ.+ամփ. քնն.+Գինքն.

- Ստուգարքային դասընթացից /ուսումնական մոդուլից/ ուսանողի ստացած արդյունարար /կիսամյակային/ միավորը ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ աղյուսակ 3-ի բաղադրիչների:

Աղյուսակ 3

Ստուգարքային դասընթացի բաղադրիչներ

	ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐ	ՄԻԱՎՈՐ
1.	Հաճախումներ (Գհաճ.)	16 միավոր
2.	Գիտելիքների յուրացման, կարողությունների և հմտությունների գնահատում • Ընթացիկ ստուգում/ ակտիվություն/ (Գընթ. ստ.) • 2 միջանկյալ ստուգումներ (Գ 2 միջ.ստ.)	 20 միավոր 50 միավոր /25+25/
3.	Ինքնուրույն անհատական աշխատանք (Գինքն.)	14 միավոր
Ընդամենը		100 միավոր

Դասընթացի /ուսումնական մոդուլի/ արդյունարար միավորը հաշվարկվում է որպես առանձին բաղադրիչներով վաստակած միավորների գումար՝

Գարդ.=Գ հաճախ.+Գընթ. ստ.+2միջ.ստ.+Գինքն.

2.4. Գնահատման սանդղակներ

Աղյուսակ 4

Ուսանողների հաճախումների գնահատման սանդղակ

Դասընթ. մասնակց. %	Հատկացված միավոր	34ժ.	51ժ.	68ժ.	85ժ.	102ժ.	136ժ.
		Բաց.	Բաց.	Բաց.	Բաց.	Բաց.	Բաց.
100-97	16	0-1	0-2	0-2	0-3	0-3	0-4
96-92	15	2-3	3-4	3-5	4-7	4-8	5-11
91-85	14	4-5	5-8	6-10	8-13	9-15	12-20
84-78	13	6-8	9-11	11-15	14-19	16-22	21-30
77-71	10	9-10	12-15	16-20	20-25	23-30	31-39
70 և ցածր	0	11 ժ. և ավել	16 ժ. և ավել	21 ժ. և ավել	26 ժ. և ավել	31 ժ. և ավել	40 ժ. և ավել

Ծանոթություն.

- 100% մասնագիտական առարկայից բացակայության դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից՝ առանց վերահանձնման իրավունքի:
- Դասընթացի կիսամյակային ժամաքանակի 30% և ավելի բացակայության դեպքում ուսանողը չի ստանում հաճախման համար նախատեսված անցողիկ միավորը:

Աղյուսակ 5

Ամփոփիչ քննության գնահատման սանդղակ

Գնահատականը		Միավորը՝ 50
«գերազանց»	10 9	50 46
«լավ»	8 7	40 36
«բավարար»	6 5	30 26
«անբավարար»	4	0
«չներկայացած»		0

Աղյուսակ 6

Միջանկյալ ստուգման գնահատման սանդղակ
/ ստուգարքի համար/

Գնահատականը		Միավորը՝ 25
«գերազանց»	10 9	25 23
«լավ»	8 7	20 18
«բավարար»	6 5	15 13
«անբավարար»	4	0
«չներկայացած»		0

Աղյուսակ 7

Ինքնուրույն անհատական աշխատանքի գնահատման սանդղակ

Ինքնուրույն անհատական աշխատանք	Միավորը՝ 14
Ռեֆերատ	գերազանց - 7 միավոր լավ - 6 միավոր բավարար - 5 միավոր անբավարար- 0 միավոր
Շնորհանդեսի պատրաստում	գերազանց - 7 միավոր լավ - 6 միավոր բավարար - 5 միավոր անբավարար- 0 միավոր
Այլ տեսակի հանձնարարաններ	գերազանց - 7 միավոր լավ - 6 միավոր բավարար - 5 միավոր անբավարար- 0 միավոր
Գիտահետազոտական գործունեություն	14 միավոր

Աղյուսակ 8

Ընթացիկ ստուգման գնահատման սանդղակ

Գնահատականը		Միավորը՝ 20
«գերազանց»	10-9	20
«լավ»	8-7	15
«բավարար»	6-5	10
«անբավարար»	4	0

Աղյուսակ 9

Ամփոփիչ ատեստավորման գնահատման սանդղակ

Գնահատականը		Միավորը՝ 100
«գերազանց»	10 9	100 95
«լավ»	8 7	85 75
«բավարար»	6 5	65 51
«անբավարար»	4	0

Գնահատման վարկանիշային միավորների սանդղակ

Գնահատական	Գնահատման միավորը	Գնահատման տառային նիշը
«գերազանց»	96-100 90-95	A+ A
«լավ»	80-89 70-79	B+ B
«բավարար»	60-69 51-59	C+ C
«անբավարար»	50 և ցածր	D
«ստուգված»	≥51	S
«չստուգված»	< 51	U

Նվազագույն դրական /անցողիկ/ միավորը /51/ ձևավորվում է՝

- քննական դասընթացների համար նախատեսված բաղադրիչների նվազագույն դրական միավորների գումարով՝

  Նվազագույն անցողիկ միավոր =Նվազագույն հաճախման միավոր + Նվազագույն ընթացիկ ստուգման միավոր + Նվազագույն ամփոփիչ քննության դրական միավոր + Նվազագույն ինքնուրույն անհատական աշխատանքի միավոր /51= 10+10+26+5/,

- ստուգարքային դասընթացների համար նախատեսված բաղադրիչների նվազագույն դրական միավորների գումարով՝

  Նվազագույն անցողիկ միավոր =Նվազագույն հաճախման միավոր + Նվազագույն ընթացիկ ստուգման միավոր + Նվազագույն 2 միջանկյալ ստուգումների միավոր + Նվազագույն ինքնուրույն անհատական աշխատանքի միավոր՝ /51= 10+10+13+13+5/:

Աղյուսակ 11

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

	Գնահատականի ձևավորումը՝ ելնելով ճիշտ լուծված թեստերի քանակից											
	Ընդհանուր թիվը	դրական (%)							բացասական (%)			
			գերազանց		լավ		բավարար		անբավարար			
			10	9	8	7	6	5	4	3	2	1
Ստուգում	50	100%	46-50	41-45	36-40	31-35	28-30	26-27	23-25	20-22	16-19	<15
Ստուգում	100	100%	91-100	81-90	71-80	61-70	56-60	51-55	45-50	40-44	31-39	<30
Միավորներ միջանկյալ ստուգման համար			25	23	20	18	15	13	0			
Միավորներ ամփոփիչ քննության համար			50	46	40	36	30	26	0			

Ծանոթություն.

- Միջին թվով մեկ հարցին տրվում է մեկ րոպե ժամանակ:

Աղյուսակ 12

Վերջնական միավորների սանդղակ

Գնահատական	Գնահատման միավորը		Գնահատման տառային նիշը
«գերազանց»	10 9	96-100 90-95	S
«լավ»	8 7	80-89 70-79	S
«բավարար»	6 5	60-69 51-59	S
«անբավարար»	4	50 և ցածր	U

➢ **Ուսանողների գիտելիքների անհատական գնահատման չափորոշիչներ**

«Գերազանց» /A+,A/՝ ուսանողն ազատ տիրապետում է նյութին, հստակ և սպառիչ պատասխանում է հարցերին, հեշտությամբ համադրում է ուսումնական նյութի տարբեր բաղկացուցիչները, հաջողությամբ կատարել է ուսումնական ծրագրով նախատեսված բոլոր առաջադրանքները, ուսանողի մոտ ձևավորված են գործնական աշխատանքի գերազանց հմտություններ:

«Լավ» /B+, B/՝ տեսական պատրաստվածության մակարդակը բավականին բարձր է, ուսանողը ուսումնական նյութի զգալի մասին տիրապետում է դասագրքերի կամ դասախոսությունների մակարդակով, սակայն վերլուծական ունակությունները բավարար չեն ուսումնական նյութը գերազանց յուրացնելու համար:

«Բավարար» /C+, C/՝ թեև ուսանողը յուրացրել է ներկայացված նյութի զգալի մասը, սակայն ուսանողը չի կարողանում հստակ, ամբողջական պատասխանել դասախոսի հարցերին, ուսանողի գիտելիքները համապատասխանում են տվյալ դասընթացի ուսումնական ծրագրի նվազագույն պահանջներին:

«Անբավարար» /D/՝ ուսանողը չի յուրացրել հիմնական նյութը, ուսանողի գիտելիքները չեն համապատասխանում տվյալ դասընթացի ուսումնական ծրագրի նվազագույն պահանջներին:

«Ստուգված» /S/՝ ուսանողն ունի տվյալ դասընթացից որոշակի գիտելիքներ, որոնք դասախոսը բավարար է համարում ուսումնառության տվյալ մակարդակի համար, ուսանողը ապահովում է տվյալ դասընթացի ուսումնական ծրագրով նախատեսված նվազագույն պահանջները: Ուսանողը վաստակում է տվյալ դասընթացի համար սահմանված ակադեմիական կրեդիտները:

«Չստուգված» /U/՝ ուսանողի գիտելիքները չեն համապատասխանում տվյալ դասընթացի ուսումնական ծրագրի նվազագույն պահանջներին: Այդ դեպքում ուսանողը չի ստանում տվյալ դասընթացի համար նախատեսված ակադեմիական կրեդիտները:

2.5. Ուսանողների գիտելիքների գնահատման ձևերը

➢ **Ընթացիկ ստուգում /ակտիվություն/**

- Ուսանողների կողմից յուրացված գիտելիքների գնահատման ձև է, որն անցկացվում է գրավոր կամ բանավոր /հարցումներ, գործնական հանձնարարության կատարում, իրավիճակային խնդիրների լուծում, լաբորատոր աշխատանք և այլն/:

  Ընթացիկ ստուգումը նպաստում է ուսանողի ակտիվությանը, ըստ որի՝

  - Քննական դասընթացների դեպքում ուսանողը պետք է կիսամյակի ընթացքում ունենա առնվազն 3 գնահատական /դրական կամ բացասական/, որոնց համապատասխան շնորհվող միավորները միջինացվում են ըստ աղյուսակ 8-ի: Երեքից պակաս գնահատականների դեպքում ուսանողին ընթացիկ ստուգումից միավոր չի շնորհվում:
  - Ստուգարքային դասընթացների դեպքում ուսանողը պետք է կիսամյակի ընթացքում մինչև միջանկյալ ստուգումները ունենա առնվազն 3 գնահատական՝ 2:1 կամ 1:2 բաշխվածությամբ, որոնց համապատասխան շնորհվող միավորները միջինացվում են ըստ աղյուսակ 8-ի:

    Որպես կանոն այն անցկացվում է գործնական, սեմինար և լաբորատոր պարապմունքների ընթացքում:
  - Ստուգարքային և քննական կարճաժամկետ դասընթացների համար սահմանել ընթացիկ գնահատականների հետևյալ քանակը՝
    1. 34 ժամ և կարճ ցիկլային տևողությամբ /1 շաբաթ/ դասընթացների համար սահմանել 1 ընթացիկ գնահատական:
    2. 51 ժամ տևողությամբ դասընթացների համար սահմանել 2 ընթացիկ գնահատական:

3. 51 ժամից ավելի տևողությամբ դասընթացների համար սահմանել 3 ընթացիկ գնահատական:

- Ընթացիկ գնահատականները միջինացվում են և միավորները տրվում են՝ համաձայն գնահատման կարգի աղյուսակ 8-ի:
- Ընթացիկ ստուգման արդյունքները գնահատվում են դասամատյանում հատկացված համապատասխան բաժնում՝ ըստ համալսարանում գործող գնահատման սանդղակի:

➢ <u>Միջանկյալ ստուգում</u>

✓ Ուսանողի գիտելիքների գնահատման ձև է, որն անցկացվում է ստուգարքային դասընթացներից, կիսամյակում երկու անգամ՝ հաստատված ժամանակացույցին համապատասխան:

✓ Միջանկյալ ստուգումն իրականացվում է բանավոր, գրավոր /թեստային տարբերակով կամ գրավոր շարադրում/, գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ, գործնական կարողությունների և հմտությունների ստուգմամբ:

✓ Միջանկյալ ստուգումներն անցկացնում են տվյալ ամբիոնի դասախոսները, միջանկյալ ստուգումներին հատկացված ժամանակահատվածում՝ համաձայն կիսամյակային օրացուցային պլանի:

✓ Ստուգումների անցկացման վերահսկողությունն իրականացվում է ֆակուլտետի դեկանի, ուսումնական մասի վարիչի, ամբիոնի վարիչի կողմից:

✓ Միջանկյալ ստուգումների թեմատիկ հատվածի բովանդակությունը, ստուգման ձևը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին շաբաթվա ընթացքում):

✓ Միջանկյալ ստուգումը համարվում է հանձնած, եթե ուսանողը ստացել է դրական միավորը՝ համաձայն հաստատված աղյուսակ 6-ի:

✓ Միջանկյալ ստուգմանը «անբավարար» ստանալու կամ անհարգելի չներկայանալու դեպքերում այն համարվում է չհանձնած, իսկ տեղեկագրում, որպես գնահատական, գրանցվում է «անբավարարին» կամ «չներկայացածին» համապատասխան միավոր /տե՛ս, աղյուսակ 6/:

✓ Միջանկյալ ստուգմանը հարգելի /հիվանդություն և այլ/ պատճառով չներկայացած ուսանողները հնարավորություն ունեն վերահանձնել պարտքերը՝ հաստատված ժամանակացույցով:

✓ 1-ին միջանկյալ ստուգումը չհանձնած ուսանողները կարող են մասնակցել երկրորդ միջանկյալ ստուգմանը:

✓ Մեկ միջանկյալ ստուգում հանձնած ուսանողը կարող է «ստուգված» համարվել, եթե ապահովել է նվազագույն /51/ և ավելի շեմը՝ համապատասխան վարկանիշային նիշ ստանալով /տե՛ս, աղյուսակ 10/:

➢ **Ամփոփիչ ստուգարք**

✓ Ամփոփիչ ստուգարքն անցկացվում է համաձայն հաստատված ժամանակացույցի:

✓ Ուսանողը «չստուգված» է համարվում՝

- դասընթացի կիսամյակային ժամաքանակի 30 և ավելի տոկոս անհարգելի բացակայություններ ունենալու,
- դասընթացի երկու միջանկյալ ստուգումները «անբավարար» հանձնելու և/կամ անհարգելի չներկայանալու և/կամ մեկը չհանձնելու, մյուսին չներկայանելու դեպքերում:
- եթե մինչև ամփոփիչ ստուգարք ուսանողը չի ապահովել 51 միավոր անցողիկ շեմը՝ գնահատման բաղադրիչների միավորների հաշվարկով:

Վերոնշյալ դեպքերում, ուսանողին տվյալ դասընթացից կրեդիտ չի հատկացվում, իսկ տեղեկագրում, որպես վերջնական գնահատական, գրանցվում է «Չստուգվածին» համապատասխան վարկանիշային միավորը և U տառային նիշը /տե՛ս, աղյուսակ 10/:

✓ Դասընթացի ամփոփիչ ստուգարքը «չստուգված» ստացած ուսանողը հնարավորություն ունի այն վերահանձնելու լուծարքի ժամանակ՝ չպահպանելով իր հավաքած միավորները:

✓ Լուծարքի ժամանակ ուսանողը հանձնում է կիսամյակի ամբողջ նյութը և կարող է գնահատվել առավելագույնը 51 միավոր /C տառային նիշ/:

➢ **Ամփոփիչ քննություն**

✓ Ուսանողի կողմից դասընթացի յուրացման որակի վերջնարդյունքն է՝ որն անցկացվում է ուսումնական կիսամյակի 18-20-րդ շաբաթներում՝ համաձայն հաստատված ժամանակացույցի:

✓ Ամփոփիչ քննության ժամանակացույցն ուսումնական մասի վարիչը ամբիոնների և ֆակուլտետների դեկանների հետ համաձայնեցված ներկայացնում է ռեկտորատի հաստատմանը, որից հետո տրվում է ռեկտորի հրամանը ժամանակացույցի կատարման և արդյունքների զեկուցման վերաբերյալ:

✓ Քննական դասընթացներն ավարտվում են ամփոփիչ քննությամբ, առանց միջանկյալ ստուգումների, և վերջնական միավորը ձևավորվում է՝ ըստ աղյուսակ 2-ի:

✓ Ուսանողին թույլատրել մասնակցելու քննությանը՝ կիսամյակի ընթացքում քննական դասընթացի բաղադրիչներից /հաճախում, ընթացիկ հարցում, ինքնուրույն աշխատանք/ առնվազն 25 միավոր հավաքելու դեպքում:

✓ Ամփոփիչ քննությանը ուսանողի ներկայությունը պարտադիր է:

✓ Ամփոփիչ քննությունն իրականացվում է բանավոր, գրավոր /թեստային տարբերակով կամ գրավոր շարադրում/, գրավոր-բանավոր ձևերի համակցությամբ, գործնական հմտությունների և կարողությունների ստուգմամբ:

✓ Ուսանողն իրավունք ունի քննական տոմսը փոխել միայն 1 անգամ, սակայն դա նվազեցնում է վերջնական գնահատականը 1 միավորով:

✓ Ամփոփիչ քննություններն անցկացնում են տվյալ ամբիոնի դասախոսները:

✓ Ամփոփիչ քննությունների անցկացման վերահսկողությունն իրականացվում է ֆակուլտետի դեկանի, ուսումնական մասի վարիչի, ամբիոնի վարիչի կողմից:

✓ Ամփոփիչ քննության թեմատիկ հատվածի բովանդակությունը, ստուգման ձևը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման չափանիշները

տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին երկու շաբաթների ընթացքում):

- ✓ Ամփոփիչ քննությունը համարվում է հանձնած, եթե ուսանողը ստացել է դրական միավոր՝ համաձայն աղյուսակ 5-ի:
- ✓ Ամփոփիչ քննության ամփոփագիրը լրացվում է քննության սահմանված օրը՝ ամբիոններում թղթային տարբերակով: Գնահատականը հրապարակելու պահից սկսած ուսանողն իրավունք ունի այն բողոքարկելու նույն օրը ֆակուլտետի դեկանին, որն էլ ընթացք է տալիս բողոքարկմանը /տե՛ս, սույն կարգի կետ 5՝ Գնահատականների բողոքարկում/:
- ✓ Ուսանողին չի թույլատրվի մասնակցելու ամփոփիչ քննությանը դասընթացի կիսամյակային ժամաքանակի 30 և ավելի տոկոս անհարգելի բացակայություններ ունենալու դեպքում:
- ✓ Ամփոփիչ քննությունը համարվում է չհանձնած՝
  - անհարգելի պատճառով քննությանը չներկայանալու կամ չթույլատրվելու,
  - ամփոփիչ քննությանը «անբավարար» ստանալու,
  - ամփոփիչ քննությունից հետո գնահատման բաղադրիչների հաշվարկից նվազագույն շեմը /51/ չհաղթահարելու դեպքերում:
- ✓ Դասընթացի ամփոփիչ քննությունը չհանձնած ուսանողը հնարավորություն ունի այն վերահանձնելու լուծարքի ժամանակ՝ չպահպանելով իր հավաքած միավորները:
- ✓ Լուծարքի ժամանակ ուսանողը հանձնում է կիսամյակի ամբողջ նյութը և կարող է գնահատվել առավելագույնը 51 միավոր /C տառային նիշ/:

➢ **Ինքնուրույն անհատական աշխատանք**

Գնահատման բաղադրիչ է, որը կատարվում է ուսանողի կողմից կիսամյակի ընթացքում և ընդգրկում է իր մեջ հետևյալ տեսակները՝ ըստ աղյուսակ 7-ի:

Ռեֆերատի և շնորհանդեսի պատրաստմանը ներկայացվող պահանջներ՝

✓ **Ռեֆերատ,** 9-11 էջի վրա տպագրված /A4 ֆորմատի/՝
- 1-ին էջ՝ տիտղոսաթերթ,
- 2-րդ էջ՝ բովանդակություն
- 3- 8 (3-10) էջեր՝ ներածություն, նպատակ, խնդիրներ, ընդհանուր նյութը, եզրակացություն:
- Վերջին էջ՝ օգտագործված գրականության ցանկի կամ համացանցային աղբյուրների հղումներ:

✓ **Շնորհանդեսի պատրաստում** և ներկայացում, 9-11 սլայդից բաղկացած /power point, PDF կամ այլ ծրագրերի միջոցով, /՝
- 1-ին էջ՝ տիտղոսաթերթ,
- 2-րդ էջ՝ բովանդակություն
- 3- 8 (3-10) էջեր՝ ներածություն, նպատակ, խնդիրներ, ընդհանուր նյութը, եզրակացություն:
- Վերջին էջ՝ օգտագործված գրականության ցանկի կամ համացանցային աղբյուրների հղումներ:

- Շնորհանդեսի ներկայացման համար ուսանողին տրվում է 10-15 րոպե ժամանակ:

✓ **Մասնակցություն ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին** և/կամ ուսանողական գիտաժողովներին, դասընթացի ծրագրի շրջանակներում, որպես ելույթ:

✓ **Այլ տեսակի հանձնարարականներ**, օրինակ կլինիկական առարկաների համար՝ գործնական հմտություններ /անամնեզի հավաքում, հիվանդության պատմության լրացում, բուժման մեթոդների մոդելավորումներ և այլն/:

3.ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

3.1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար Համալսարանի Որակի ապահովման բաժնի կողմից մշակման ընթացքում է համակարգչային հատուկ ծրագիրը: Ուսանողի ընդունման պահից սկսած, դեկանատը վարում է ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից անմիջապես հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և միջին որակական գնահատականը /ՄՈԳ/:

3.2. Ուսանողի վաստակած կրեդիտները ամրագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

3.3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- ✓ գումարային կրեդիտների քանակը,
- ✓ գնահատված կրեդիտների քանակը,
- ✓ վարկանիշային միավորները,
- ✓ միջին որակական գնահատականը:

3.4.**Գումարային կրեդիտը** (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

3.5. **Գնահատված կրեդիտը** (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային անցումային միավորներով.

$$ԳԿ = \sum Կրեդիտ_i:$$

3.6.**Վարկանիշային միավորը** (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին

դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար:

$$ՎՄ = \sum Կրեդիտ_i \times Գ_i,$$

որտեղ $Գ_{արդ}$-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

3.7. **Միջին որակական գնահատականը** (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ).

$$ՄՈԳ = \frac{ՎՄ}{ԳԿ}:$$

3.8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունարար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը:

4. ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ

- Ամփոփիչ ատեստավորումը շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ստուգումն է՝ բանավոր ամփոփիչ քննությունների ձևով:
- Ամփոփիչ ատեստավորման հարցաշարերը կազմում են մասնագիտական ամբիոնները, հաստատվում է ռեկտորատի նիստում և շրջանավարտներին է տրամադրվում ոչ ուշ, քան ամփոփիչ ատեստավորումից երեք ամիս առաջ:
- Մասնագիտական ամփոփիչ ատեստավորման գնահատումը կատարվում է 10 միավորանոց սանդղակով /տես, աղյուսակ 9/:
- Ամփոփիչ ատեստավորումներին թույլատրվում են մասնակցելու այն շրջանավարտները, ովքեր ավարտել են հիմնական մասնագիտական կրթական ծրագրով ուսուցման լրիվ դասընթացը և հաջողությամբ հանձնել ուսումնական պլանով նախատեսված բոլոր ստուգարքներն ու քննությունները և կուտակել համապատասխան կրեդիտներ:
- Ամփոփիչ ատեստավորումներն անցկացվում են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կողմից՝ բուհում իրականացվող յուրաքանչյուր մասնագիտական կրթական ծրագրով:
- Ամփոփիչ ատեստավորման վերջնական արդյունքների համաձայն քննական հանձնաժողովը որոշում է կայացնում շրջանավարտներին տալ համապատասխան որակավորում և հանձնում բարձրագույն կրթության վկայական:
- Ամփոփիչ ատեստավորումներն իրականացվում են համաձայն «ՀՀ բարձրագույն մասնագիտական ծրագրեր իրականացնող հաստատությունների շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» ՀՀ ԿԳ նախարարի 07.11.2017թ. N1282-Ն հրամանի և «ԱԲՀ-ի շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» կարգի:

5. ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

Համալսարանում իրականացվող կրթական ծրագրերում յուրաքանչյուր դասընթաց կազմակերպվում է միջանկյալ և հանրագումարային ամփոփիչ ստուգմամբ: Բոլոր դասընթացներն ավարտվում են պարտադիր գնահատմամբ: Ուսանողի կողմից միջանկյալ ստուգումների, ամփոփիչ քննությունների և ամփոփիչ ատեստավորման գնահատականը ենթակա է բողոքարկման, եթե ուսանողը համաձայն չէ գնահատականի հետ և ունի հիմնավոր ու բավարար հիմքեր բողոքարկման համար:

Բողոքարկման ընթացակարգը հետևյալն է՝

5.1. Բողոքարկման դեպքում ուսանողը դիմում է ներկայացնում դեկանին:

- *Միջանկյալ ստուգման, բանավոր քննության* դեպքում դիմումը լրացվում է անմիջապես տվյալ ուսանողի քննությունից հետո՝ առանց քննասենյակից դուրս գալու, դեկանը կազմում է հանձնաժողով և դեկանատի ներկայացուցչի, ամբիոնի վարիչի հետ կատարվում է բողոքարկումը:

  Ուսանողի գնահատումը կարող է բարձրացվել, եթե նա հիմնավորում է և ապացուցում, որ հարցին տվել է սպառիչ պատասխան, կամ ցուցաբերվել է իր նկատմամբ սուբյեկտիվ մոտեցում, հակառակ դեպքում գնահատականը մնում է անփոփոխ:
- *Գրավոր կամ թեստային ստուգման* դեպքում բողորքարկումը կատարվում է երկու աշխատանքային օրվա ընթացքում՝ բողոքարկման դիմումին կցելով ուսանողի գրավոր աշխատանքը:
  - ✓ Գնահատականը կարող է բարձրացվել, եթե բացահայտվում է ստուգման սխալ, հակառակ դեպքում գնահատականը մնում է անփոփոխ:

Բողոքարկման արդյունքում վերջնական գնահատականը հաստատվում է բողոքարկման հանձնաժողովի անդամների կողմից և ամրագրվում է տեղեկագրում:

- Բողոքարկման արդյունքում փոփոխված գնահատականը ենթակա չի կրկնակի բողոքարկման:

6. ԼՈՒԾԱՐՔ

Ակադեմիական՝ պարտքերի մարումն իրականացվում է կիսամյակային ստուգարքների և քննությունների ավարտից հետո, վերահանձնման երկու փուլով, համաձայն հաստատված ժամանակացույցի: Ակադեմիական պարտքը ձևավորվում է դասընթացի վերջնական հաշվարկային միավորի հիման վրա:

Կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփելուց հետո /ներառյալ տվյալ քննաշրջանի երկու վերահանձնումները/, ուսումնական մասը ձևավորում է առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտք ունեցող ուսանողների ցանկը՝ այն հասանելի դարձնելով ուսանողներին և ամբիոններին:

Կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփելուց հետո /ներառյալ երկու վերահանձնումները/ 12-ից ավել կրեդիտ կազմող ակադեմիական պարտք ունենալու դեպքում ուսանողը հեռացվում է համալսարանից:

Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած /փորձաշրջանի կարգավիճակում գտնվող/ ուսանողներն առավելագույնը 12 կրեդիտ կազմող

ակադեմիական պարտքերն իրավունք ունեն վերահանձնելու ևս երկու անգամ՝ անմիջապես հաջորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքի երկու փուլերի ընթացքում:

Ավարտական կուրսերի դեպքում ձմեռային քննաշրջանից և նրա լուծարքներից հետո ակադեմիական պարտք ունեցող ուսանողների համար ևս երկու վերահանձնումների ժամկետ սահմանել ապրիլ ամսի վերջին տասնօրյակը:

Ավարտական կուրսերի 12-րդ կիսամյակի վերահանձնումները կազմակերպել մինչև ամփոփիչ ատեստավորումները՝ մեկ վերահանձնումով:

Ուսանողն իրավունք ունի վերահանձնելու դասընթացի ակադեմիական պարտքը առավելագույնը երկու անգամ:

Հաջորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքի 2 փուլերի ընթացքում ևս երկու անգամ վերահանձնումներից հետո մնացած ակադեմիական պարտքը, անկախ քանակից, վերահանձնման ենթակա չէ և հիմք է հանդիսանում ուսանողին Համալսարանից հեռացնելու համար:

Լուծարքը կազմակերպվում է այն դեպքում, երբ վերջնական վարկանիշային միավորը հավասար է «D»՝ քննության կամ «U»՝ ստուգարքի դեպքում: Այսինքն՝ թվային արժեքով փոքր է 51 միավորից:

Վերահանձնման ժամանակ դրական գնահատական ստացած ուսանողը, անգամ մյուս բաղադրիչների գումարով չհավաքելով անցողիկ 51 միավորը, համարվում է առարկան հանձնած /տրվում է համապատասխան կրեդիտը/:

- Ստուգարքային դասընթացի դեպքում լուծարքի հնարավորություն ունեն հետևյալ ուսանողները՝
  - ✓ 30 և ավելի տոկոս բացակայություններ ունեցող,
  - ✓ երկու միջանկյալ ստուգումները «անբավարար» ստացած, և/կամ անհարգելի չներկայացած, և/կամ մեկը չստացած և մյուսին չներկայացած,
  - ✓ մեկ միջանկյալ ստուգումը դրական հանձնած ուսանողը, ով չի հավաքել նվազագույն /51/ միավորը:
  - ✓ Լուծարքի ժամանակ ուսանողը հանձնում է կիսամյակի դասընթացի ամբողջ նյութը և կարող է գնահատվել առավելագույնը 51 միավոր /S տառային նիշ/՝ չեղարկելով նախկին միավորները:
- Քննական դասընթացի դեպքում լուծարքի հնարավորություն ունեն հետևյալ ուսանողները՝
  - ✓ քննությանը չթույլատրված /դասընթացի կիսամյակային ժամաքանակի 30 և ավելի % անհարգելի բացակայություններ/,
  - ✓ ամփոփիչ քննությանը «անբավարար» ստացած,
  - ✓ անհարգելի պատճառով քննությանը չներկայացած,
  - ✓ ամփոփիչ քննությունից հետո գնահատման բաղադրիչների հաշվարկից նվազագույն շեմը չհաղթահարած:
- Լուծարքի ժամանակ ուսանողը հանձնում է կիսամյակի ամբողջ նյութը և կարող է գնահատվել առավելագույնը 51 միավոր /C տառային նիշ/՝ չեղարկելով նախկին միավորները:

- Լուծարքների արդյունքները ամրագրվում են տեղեկագրում:
- Հարգելի պատճառով ամփոփիչ քննությանը չներկայացած ուսանողները լուծարքի ժամանակաշրջանում, համապատասխան իրավական փաստաթղթերի առկայության դեպքում /տեղեկանքներ՝ բժշկական, ոստիկանությունից, դեսպանատնից, զինկոմիսարիատից, որոնք պետք է ներկայացվեն մինչև քննաշրջանի ավարտը/, հնարավորություն ունեն քննությունը հանձնելու ընդհանուր կարգով՝ պահպանելով նախկինում հավաքած միավորները: Սա համարվում է քննություն և ոչ լուծարք, իսկ «անբավարար» ստանալու դեպքում ուսանողը ունենում է երկու լուծարքների հնարավորություն:
- Ուսումնաարտադրական պրակտիկայի ստուգարքը չհանձնելու դեպքում, այն համարվում է ակադեմիական պարտք և ուսանողին չի տրվում համապատասխան կրեդիտը:

  Ուսանողին հնարավորություն է տրվում մինչև հաջորդ ուսումնական տարվա սկիզբը լրացնել և հանձնել ուսումնաարտադրական պրակտիկայի ստուգարքը:
- Ավարտական կուրսի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկայից ակադեմիական պարտքը պետք է լրացվի և հանձնվի մինչև տվյալ ուսումնական տարվա ամառային քննաշրջանի սկիզբը:

7. ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

- Ըստ ուսման առաջադիմության ուսանողները դասակարգվում են առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա ուսանողների:
- Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝
  - կիսամյակում ունի 30 կրեդիտ միջին ուսումնական բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),
  - հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների կրեդիտները,
  - ապահովել է տվյալ կրթական աստիճանի (ծրագրի) համար սահմանված կիսամյակային ՄՈԳ-ի նվազագույն շեմը:
- Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված երեք պայմաններից որևէ մեկը:
- Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղել թերացումներն ու բացթողումները և բարձրացնել ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան: Փորձաշրջանի տևողությունը սահմանում է բուհը:
- Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը դառնում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:
- Ուսանողը համարվում է հեռացման ենթակա, ակադեմիական անբավարար առաջադիմություն ցուցաբերելու պատճառով՝ կիսամյակի արդյունքներով 12-ից ավել կրեդիտներ կազմող ակադեմիական պարտքերի դեպքում: